

հայ, ո՛վ եղբայր, յորժամ կարգաս ընդ նմին
և զաշակերտ նորա զՅովսէփ մի մոռանայցես
ի բարի կամաց և ած. զձեզ յիշէ ի բարի»:

Երկու ամուսինների և նրանց նուիրա-
բերած աւետարանի մասին տեղեկութիւն
ունինք նաև Խժկոնից սբ. Սարգսի վանքի
հարաւային պատի մի արձանագրութեան
մէջ, որ մէջ ենք բերում ամբողջութեամբ
նմանահանութեան հետ (պատ. 10. ձախ
կամարի տակ):


9. իւ հպիսկոպոսիս տը Արասա և այլ
սբ եղբարցս եւ սոքա

10. փոխարէն հատուցին մեզ զՂազարու
տաւնին պատար

11. ազն մինչև ի զալուստ բանին այ.
զկեսն ինձ առն

12. են Բռնաւորիս և զկէսն զուգակցի
իմո Ազատիկնա

13. Արդ որ զգրեալս մեր կատարին աւր-
հնեալ լիցին



Պատկեր 10

1. ի թուին: ՈՁԹ:

2. Շնորհիւ եւ ող

3. որմութքն այ ես բռնաւորս

4. ծառայ քի եւ ամուսին իմ Ազատի

5. կին ողորմութբ ածասէր պարոնի
իմո Գրիգ

6. որո միաբանեցաք սբ ուխտիս Խըձ-
կաւնից եւ ընծաե

7. ցաք ի սմա զմեր դանձազին այդին որ ի
Մրեն է (զուցէ«և») փոխանակ «է» ի զոր

8. Աղբրորն կոչեն եւ աւետարն մեծա-
զին ի ձեռն ածապատ

14. ի քէ այ եւ որք խափանեն որոչեալ
լիցին ի փառաց որդ

15. ոյն այ⁽¹⁾.

Խնդիրը պարզ է, որ արձանագրու-
թեանս մէջ յիշուած աւետարանը նոյնն է,
որի մասին խօսք եղաւ վերև. չորս տարի
յետոյ երկու ամուսինները նորից միաբա-
նում են Խժկոնից ուխտին՝ եւ այս անգամ
նուիրում իրենց դանձազին այդին, «որ ի

(1) Ընդգծուած տառերը այս եւ հետեւեալ ար-
ձանագրութիւնների մէջ կցուած են իրար: